«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia • Tel: +374 10 582532 • Fax: +374 10 564111 • URL: www.ysmu.am • E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/355

«25» 03 2019 թ.

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ ՊԱՐՈՆ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Անանյան

Ձեզ ենք ներկայացնում 21.03.2019թ. կայացված և նույն ամսաթվին հրապարակված թիվ «ԳԲՔԱ-ԱՄ-2019/28» որոշումից բխող իրականացված գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով թիվ «ԳԲՔԱ-ԱՄ-2019/28» որոշումը՝ 2019 թվականի մարտի 22-ին հրավիրվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստ: Կայացած նիստի ընթացքում հանձնաժողովը որոշել է չկայացած հայտարարել «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 22-րդ, 31-րդ, 43-րդ և 49-րդ չափաբաժինները: Նիստի արձանագրությունը, ինչպես նաև վերոհիշյալ չափաբաժինների չկայացման մասին հայտարարությունը 2019 թվականի մարտի 25-ին հրապարակվել են տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Նշված չափաբաժիններով սահմանված ապրանքատեսակների չկայացման հետևանքով ստեղծվել է ֆորս մաժորային իրավիճակ: Խնդրի կարգավորման նպատակով դիմել ենք ՀՀ ֆինանսների Նախարարություն:

Կից ներկայացնում ենք «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. թիվ 6 նիստերի արձանագրության պատճենը:

Առդիր 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Արձանագրություն N 6

«ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«22» «մարտի» 2019թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Ղարիբյան

1. «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» ծածկագրով կասեցված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման մասին

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.03.2019թ. կայացված և նույն օրը տեղեկագրում հրապարակված թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/28 որոշումը՝ հանձնաժողովը որոշեց «ԷԱՃԱՊՁԲ-2019/4-5-ԵՊԲՀ» էլեկտրոնային աճուրդ N 22, 31, 43, 49 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

**Հանձնաժողովի նախագահ՝** (ստորագրությունը) **Ա.Հակոբյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** (ստորագրությունը) **Հ.Սարգսյան**

(ստորագրությունը) **Մ.Գրիգորյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** (ստորագրությունը) **Մ. Ղարիբյան**